

ձուներէ անուները, որոնց ջանքով կառուցուի մէկ է այս շինութիւնը:

Հիմքը օրհնած ջրով սրկելուց յետոյ, շինութեան հողաբարձուները օժիւած քարը դրին հիւքի մէջ: Շինութեան հողաբարձու ա. Ս. Բաղդիւրեանց կարգաց ի լուր հասարակութեան քարի արձանագրութիւնը, որը ա. Ստոնեանց թարգմանեց ռուսաց լեզուով՝ մնացած օտար հասարակութեան համար կատարելեալ մարմինը: Մարմինը յետոյ խուռն բաղնիքի մէջ դրանք ա. Ալեքիմի շինութեան քաղը, որ ստորադասուած էր նախաձեռնի, որի ժամանակ առաջարկվեցան միջանկի կենտրոնը վերջումը ա. հասանգստելու առաջարկեց տեղիս հայերի կենտրոնը և շնորհակալութիւն յայտնեց նրանց ունեցած բարեգործական ձգտումները համար:

Աղքատանոցը շինուի, ինչպէս յիշեցաւ, հանգուցեալ կայսր Ալեքսանդր II-ի յիշատակին, միմիայն տեղիս հայերի օգնութեամբ: Ընդհանուր գումարը 8000 լուրի է:

Ձ.

ՆԱՄԱԿ ՆՈՒՅՈՒՅ

Ապրիլի 3-ին

Մի երկու շաբաթ առաջ Նոստրա դաւառի Նոստրա-Վլադիմիր թուրքաբնակի գիւղում, մի հին կիսաւեր խրճիթ քանդուի ժամանակ, պատերից մէկում գտնվեցան մի «ճաշոց» մօտաւորապէս երկու հարիւր տարեկան տապալած, և մի ուրիշ գիւղի, որին տեսնելու առիթը ունեցաւ տղաների գրողը: Գրքերը գտնուի են պատի մէջ շինած պահարանում, որի առջևի կողմը շարած է լինում աղիւտով, և երեսից «սուղ» քաշած: Խրճիթը փորելու ժամանակ պատահմամբ ներկայ են լինում մօտակայ թուրքաբնակ Ղուկասէնցի գիւղի տարիւնը և ռուսաց գիւղական ղարդից ռուսացի ա. Խիքէնդիւն. երկու պարոնները իրար հետ համաձայնութիւն կայացնելով՝ առաջինը վերջում է ձ ա շ ո ճ ը, և ներկայացնում տեղիս տարիականները, իսկ երկրորդը վեր է առնում միւս գրքը և օրերուն իր հետ բերում քաղաք: Գրքը ձեռագիր է, մօտաւորապէս 600 երեսից բաղկացած. գրքը գեղեցիկ և սլաղ է, թուղթը հաստ և մագաղաթի նման հարթ, շատ տեղ խոնաւութիւնից թղթերը իրար կպած և փայցած լինելով՝ ընթերցանութիւնը դժուարանում է. առաջին թերթը ընկած լինելով, գրքի անունը չէ իմացուի: Սկզբում գրված է գրքի ցանկը, որից երևում է նրա եկեղեցականների համար կանոնագիրք լինելը, բայց գրքի վերջերում կան նաև աշխարհագրական տեղեկութիւններ, ոտանաւորներ և այլն: Յանկից յետոյ գրուած է. «Վասմանը և կանոնը». այս մասին երկար խօսելուց յետոյ, քանի մի թերթ առանց գրելու անցնում է. ապա նկարված է Քրիստոսի պատկերը ամենապայծառ դիմելով և նուրբ գծագրութեամբ, իսկ այնուհետև դարձեալ կանոններ և դարձեալ խրատներ, ինչպիսիք են՝ կանոնը Ս. Թանասայ, կանոնը Նիւրդի, կանոնը Կ. Պօլսոյ ս.

ժողովոյն և այլն և այլն... կանոնը չհասնում է ան, որ զանազանագոյն դժերով և տառերով որոշված են հասարակական ճիշդագրութիւնները: Բոլորից յետոյ գրված է կաթողիկոսների անունանշանակը այսպէս. «Քահանայապետը Հայոց Մեծաց, Գրիգորիոս Մեծ հայրապետ... (և այլն) ըստ կարգին (մինչև) Մովսէս եղև քահանայապետ ամս ԺԲ. Ղազար ամս ԼԵ. Գրիգորիս ամս ԻԲ. մինչև Զ. ձԾԵ թակաւն, որոյ տոմարիս լինի այս (այս նախադասութիւնը անհասկանալի է), յորում արար նաւակաւորս եկեղեցւոյն վարդապետի որի Գաղիկ կամարակաւն և հաս լուր աւետեաց, թէ Հուշանն կամարակաւն դուստրն վահանայ Պատրիկի զխոտովանող անուն ժառանգեաց վասն Քրիստոսի Աստուծոյ չարչարեալ և խառն միջագետացն», յետոյ աւելացնելով՝ Գրիգորիս այլ և ամս Է, վերջացնում է, դնելով իր անունը կրճատած կերպով և որը կարգացվում է այսպէս. «զորեցաւ սակաւ գիրս ձեռամբ Գրիգոր երիցու, աղաչեմ յիշել ի Տէր»: Երևում է, որ գրքի հեղինակը ժամանակակից է Գրիգորիս կաթողիկոսին, Գաղիկ կամարակաւն և վահան Պատրիկին, և թէ միայն յայտնի են այդպիսի ժամանակակից պատմական անձինք: Ոչ գրքի սկզբում և ոչ վերջում չը կայ մի որ և է տարեթիւ, բայց գրքի առաջին երեսից, որի լուսանցքում թանշաններով գրուած է 1033 թիւը. թէ թանագրի գոյնը և թէ թանշանների ձևը ու մեծութիւնը հաստատում են թանշանի և ձեռագրի հեղինակի մի և նոյն անձնատուութիւն լինելը. ուրեմն թէ 1033-ը ձեռագրի թակաւն ընդունելու լինելը, կը դուրս գայ, որ ձեռագիրը 854 տարեկան հնութիւն է: Ուսուցիչ ա. Խիքէնդիւն ոչ մի կերպ չէ ուղղում մի երկու ժամ անգամ զիջանել գրքը մի որ և է ուրիշին, որով թեկուս կարելի լինել աւելի մանրամասն և հետաքրքիր տեղեկութիւններ քաղել: Ձեռագրի այս գիւտն էլ մի նոր ապացոյց է, որ Նոստրա չըջակայ համարիս բոլոր թրքաբնակ գիւղերը հնումը հայերով են եղել բնակեցրած: Պ. Խիքէնդիւն մտադիր է ձեռագիրը ռուսաց ղարդիցները զերկիտօրին ուղարկելու:

Ա. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի քաղաքային վարչութեան յայտաբարութիւնը զինուորագրութեան մասին, որ տըսվեցաւ առանձին թերթերով և տարածվեցաւ քաղաքում: Ապրիլի 5-ին, այժմ մենք արտասպառ ենք «Մշակի» էջերի մէջ մեր գաւառական ընթերցողների համար:

Ստացանք փարիզում հրատարակված մի ֆրանսերէն բրոշուր: Դա այն խնջոյքի նկարագրի է, որ փարիզի «Հայրենասիրական» հայոց ընկերութեան անդամները տուած էին Սպարապետի նախկին հանրապետութեան նախագահ Կաստէլարին փարիզի Ռիշ կաթիլի մէջ: Գրքի վերջում պարունակում է իր մէջ թէ ա. Կաստէլարի

ձառը և թէ այն բոլոր պարոնների ձառերը, որոնք իրանց մտքերը յայտնեցին այդ ժողովի ժամանակ: Նոյն ժողովի մէջ «Union Mediterranée» շաբաթաթերթի խմբագիրը ա. Գրիգորիս երկար ձառի մէջ ողջունելով ա. Կաստէլարին մամուլի կողմից և կապելով նրա անունը հայերի մտաւոր վերանորոգման գործի հետ, վերջացրեց իր խօսքը հայ մտաւոր գործիչների և հայոց մամուլի կենտրոն առաջարկելով յիշելով այդտեղ երեք հատ հայոց լրագիրներ՝ Մարտիի «Արմէնիա», Կ. Պօլսի «Արեւիկ» և Թիֆլիսի «Մշակ» լրագիրները:

ԱՐՄԱՆԱՆԻՑ մեզ գրում են: «Մեր վաճառականները ուրախութեամբ կարդում են այժմ «Մշակի» համարները և մանաւանդ նրա առաջնորդող սկսում է հասկանալ որ աւելի օգտակար է աւելի հետաքրքիր է կարգաւ մեր ներքին կեանքից վերջացած, ներքին կեանքը զննող, զննադատող յօդուածները, քան թէ հեռագրիցներից վերջացած տեղեկութիւններից կազմված՝ քաղաքական հարցեր վճռող առաջնորդող յօդուածներ, որոնք մեր կեանքին ամենեւին չեն վերաբերում»:

Մեզ գրում են ԱՐՄԱՆԱՆԻՑ որ այս տարի ձմեռը անհամեմատ շատ էր անցեալ տարեկանից: Տեղացիները դրանից այն գուշակութիւնն են դուրս բերում, որ այս տարի առատ պտղաբերութիւն է լինելու:

«Աղբիւր» ամսագրի տարվի տեսարանում տըսված է հետեւեալը՝ «Աղբիւր» անցեալ 1886 թիւն ունէր 985 իսկական բաժանորդ, որոնցից 358 հոգի դեռ մինչև օրս չեն վճարել իրանց բաժանորդագինը: «Աղբիւր» առաջիկայ համարում դիտարկութիւն կայ, առանց բացառութեան, տպագրելու բոլոր այդ 358 անձինքների աղաքանակներն ու կոչումները:

ԱՐՄԱՆԱՆԻՑ մեզ գրում են, «Այստեղի հայոց ղարդիցների ուսուցչական խումբը բաժանված է մի քանի կուսակցութիւնների. մի կուսակցութիւնը միւսին վնասելու համար գործ է դնում ամեն տեսակ խտրութիւններ: Առհասարակ ուսուցչիները յարաբերութիւնները շատ լարված են, և այդ բանը շատ վատ ներդրութիւն է անում ուսումնարանի առաջադիմութեան գործի վրա: Յանկալի է, որ այդ խտնակութիւնների պատճառները մէջ տեղից վերացվեն»:

ՎԵՐԻՆ-ԱՐՄԱՆԱՆԻՑ մեզ գրում են. «Մի քանի օր առաջ այստեղ եկաւ դաւաճաւոր օգնականը և կոչնագրի մէջ մտցրեց այն բոլոր անձանց, որոնք իրանց հասակին նայած՝ սկսեց ենթարկվել զինուորականութեան: Այդպիսի երիտասարդների թիւը հասնում է 40—43-ի»:

Նորերում կարգադրութիւն եղաւ, որ Անդրկովկասեան երկաթուղու վարչութեան մէջ այն ծա-

նայողները, որոնք պատկանում են հրէական կրօնին, արձակվին իրանց պաշտօններից: Այդ կարգադրութիւնը, ինչպէս հաղորդում է «Нов. Общ.» թիւը՝ լրագիրը մեծ անհանգստութիւն պատճառեց յիշեալ վարչութեան մէջ ծառայող հրէաներին, և բանը մինչև անգամ այնտեղ հասաւ, որ նոյանից մի քանիսը որոնց մէջ և հինգ հոգուց բաղկացած մի ընտանիք, մկրտվեցան և ուղղափառութիւն ընդունեցին, որպէս զի չը գրկվին իրանց պաշտօններից:

ՎԵՐԻՆ-ԱՐՄԱՆԱՆԻՑ մեզ գրում են: «Նորերում մեր Նրեանի ուսումնարանական ղերեկցիայի կողմից ա. Պատնալով այցելեց մեր ղարդիցները: Պ. Պատնալով զննեց աշակերտներին ուսաց լեզուից և ուսաց պատմութիւնից, ընդհանրապէս շատ զոհմնաց, և ցանկութիւն յայտնեց որ աշակերտները կարողանան թուրքաբնակները նոյնպէս ուսերէն պատմել: Պարոնը այցելել է նոյնպէս և ներքին Աղբիւրի, Նախիչևանի և ուրիշ մի քանի տեղերի ղարդիցները»:

Մի քանի օր սրանից առաջ զաղթականները մի նոր խումբ Թիֆլիսում անցաւ դէպի Կարսի նահանգը: Այդ զաղթականները վերին աստիճանի աղքատութեան մէջ են, այնպէս որ նրանցից շատերը քաղաքի փողոցներում ողորմութեմ էին հաւաքում:

Անդրկովկասեան երկաթուղու ակցիօներները մեծ մասը ընդգէմ են երկաթուղին դանձարանին յանձնելու մտքին: Այդ պատճառով, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, ֆինանսների միջնորդութիւնը մշակում է պայմանների մի նոր նախագիծ:

1882 թիւն Թիֆլիսում գումարվեցաւ ընդհանուր ուսուցչական ժողով: Այդ ժողովում վճովեցաւ, որ չորս տարուց յետոյ, այն է 1886 թիւն նորից գումարվի ուսուցչական երկրորդ ընդհանուր ժողով: Եւ միաժամանակ Այժմ, կարող ենք, իբրև հաստատ իրողութիւն հաղորդել, որ այդ նախագիծը ընդհանուր ուսուցչական ժողովը այլ ևս չէ գումարվելու: Առաջին ուսուցչական ժողովը արդէ անցել է հինգ տարի, բայց այդքան ժամանակի ընթացքում այն ժամանակ կազմակերպված կարգադրիչ յանձնաժողովը գէթ մի ընդհանուր հաշիւ չը ներկայացրեց հասարակութեանը իր գործունէութեան, և իր ձեռքի տակ եղած գումարների մասին: Այժմ, երբ արդէն յայտնի իրողութիւն է, որ երկրորդ ընդհանուր ուսուցչական ժողով չէ գումարվելու, կարծում ենք, որ ամենաարար ժամանակն է վերջացնելու բոլոր հաշիւները և մնացած փողերը յանձնելու մի այնպիսի հաստատութեան, կամ նպատակի, որի գործադրութիւնը կարող է օգուտ բերել: Հասարակական փողերի և գործերի հաշիւները պէտք է ծախսվեն իրան հասարակութեանը, որպէս զի նա կարողանայ նպատակադարձը կերպով գործադրել նրանց: Յանկալի է իմանալ այդ մասին այժմ:

նեցի, որ մանրամասնաբար բացատրում է թէ ինչպէս պ ա պ ի ո ս չը ծնւելով և ծխախոտի վրա գործ դրելով փողը հեղուհեղեմ խնայելով, այդ յետ գցած գումարով կարելի է տ ու ն առնել: Բաղդաւոր պոլսեցիներ... ծխախոտի ծուխով խոտով ձեռ համար աներ էք կառուցանելու, չնորսով «Տնտես» ամսագրի իմաստուն խորհրդներ:

Նոյն «Տնտես» ամսագիրը խորհուրդ է տալիս կարգաւ, որպէս գեղեցիկ գրական ստեղծագործութիւն, ա. Կիրակոս Ղազարեանի Կ. Պօլսում նորերում հրատարակված «Երան նամակներ» անունով յիմար գրքը, աւելացնելով որ այն երկիրների վրա, որտեղ ճանապարհորդել է Ղազարեան, ճիշդ տեղեկութիւն ուղղել պէտք է կարգաւ Ղազարեանին էֆէնդիի նամակները՝ «քանզի նա շատ մօտիկ կը ճանչէ երկիրն»:

Բայց թէ ճիշտ է ճանաչում ա. Ղազարեանն այն երկիրները, որտեղ ճանապարհորդել է, ընթերցողը կարող է եղբայրացնել հետեւեալ անմատոթիւնները:

Անցնելով Թիւրքիայից դէպի ռուսաց սահմանը, հեղինակը հետեւեալ նկարագրութիւնն է անում մեզ:

«Ռուսաց կողմը, որ ոչ ծառ կար և ոչ շուք, դեռեւորը կը ներուէիք արևու տաքութիւնն և երբ որ ռուս պաշտօնականներէ և ուղտատներէ կը

խնդրէինք դուր բանալ, շ թ ո շ թ ա թ ո յ (ինչ կը խօսէր) պատասխանը կառնէինք: Վերջապէս եկան կիւրմեցի հայեր զիւ հարցնելու և մենք հասկցանք որ սպասել պէտք է եղեր 3 ժամ. ետինքի ատեն միայն կը բացուի դուռը (?) օրը մէկ անգամ, որ ռուսերէն կըսեն ա պ ո դ »:

Նկարագրելով Ալեքսանդրապոլ քաղաքը, հանձարել պոլսեցի ճանապարհորդը հետեւեալ յիմարութիւններ է չափում իր նկարագրութեան մէջ:

«Կառավարութիւնն (Ալեքսանդրապոլի) է մութ թշուարեղութիւն երևանի. ունեն մի պաշտօնեայ առ և տր ա կ ա ն զատերու և ուրիշ մը պ ա ա ժ ա կ ա ն ձեւի (ստոյգաթ կառավարութեան) իբր գատախաղ և այլն. քիչ մարդով կը կառավարին, չունին ժողովներ կամ ժողովրդական անշաւք»:

«Ժողովուրդը ունի մի ժողով թ է փ ու է թ անուամբ 10—15 անձէ բաղկացեալ. ամեն տարի նոր ընտրութիւն կըլլայ և կառավարութիւնը անոնցմէ մին կընտրէ թ է փ ու է թ է թ (իբր նախագահ). ասոնք կը բաժնին տուրքերը (?), կը վճարեն մանր մօնր վճարը (?) և ունին բաւական կարեւորութիւն իրենց սահմանի մէջ»:

Ալեքսանդրապոլի ատկորութիւնների նկարագրութեան մէջ գտնում ենք հետեւեալ անմիտ տեղեր:

«Ճաշէ յառաջ, մանաւանդ երկրորդի (?) անհրաժեշտ է զ ա թ ու է կ ի (նախաճաշ մը) և ա-

պա ճաշի սեղանը, որ կը տեւ կէս ժամէն մինչև 3—4 ժամ. պիտի ըլլայ Կաթիլի (?) և Դոմբա-նիայի զինի, կարծես հայի հետ կապված է նաև զինին. առանց զինի ճաշելը նշան է աղքատութեան: Չաբուսկին կը բաղկանայ ապուխտ, դուրկի և շամպի ձուկեր, երշակ, կարագ խոլ, պանիր, աղցաններ, խալկար և այլն, որ կը տեւ կէս ժամ (ինչ, խալկար կը տեւ կէս ժամ): Չաբուսկիի աստի կը գործածեն օղի կամ դօնիաք, իսկ սեղանի վրա զինի և շամպանայ (իւրաքանչիւր մէկ մանթիլոցէն մինչև վեց մանթիլոց կայ»:

Համեմատելով երևանի և նկարագրելով այդտեղի մեծամեծներին, հեղինակը օրինակի համար անում է. «Գէհրիման աղէն, որ մի ր ա վ ո յ ի ու է ի նախաճաշ է (առևտրական ատենին), կը վճռէ նախնական դատեր Նրեանի, և կը վերադնէ գաւառներէ դառած վճարողներ (իւրաքանչիւր)»:

Եւ այդ բոլորից յետոյ պոլսեցի դեռ յանդերձութիւն ունեն վերաբերվելու երբ նրանց հ ո ս ո ս էք անուանում... Ոչինչ չիմացած, ոչինչ չը հասկացած, ոչինչ չը կշռած՝ ամեն բանի վրա խօսել և դատողութիւն տալ,—հաճ հօտանքի կեանքի կանոնը:

Եւ դեռ յանդիմում են գրքեր հրատարակել: Հօտանքից մին մի յիմար գիրք է հրատարակում, միւս հօտը նրա գիրքը գոյում է և մեզ խորհուրդ է տալիս կարդալու...»

Ֆիլիստոն երկարացաւ, բայց ամբողջ ժամանակ խօսեցի դրեթէ միմիայն պոլսեցիների մասին իսկ մեր մասին գրեթէ ոչինչ...

Բայց ինչ խօսել մեր մասին...

Հիմա ամբողջ Թիֆլիս քաղաքը միայն մի բան վրա է մտածում,—թէ Երբ կաւարովի ջրանցքը և ջուր կը ստանանք:

Նախ դեռ ևս յայտնի չէ թէ հեռուից բերված խողովակները կը դիմանան արդեօք ջրի ճնշմանը և չեն ճալթվի...

Երկրորդ հարց է. կարելի կը լինի, արդեօք Աւստրալի արդիւնների ջուրը խմելու Ասում են որ այդ ջուրը իր մէջ զ լ ա ու է թ է ի ու ն աղի մի քանակութիւն է պարունակում, որ յայտնի է որ պէս լ ու է թ ո ղ ա կ ա ն...

Ասում են որ քաջի առաջ ունենալով որ նոյն ջրանցքից ջրի առաջին բաժանը խմելու բօսկի ամբողջ քաղաքը կարող է հիւանդանալ,—այդ պատճառով Անդրկովկասի ամեն կողմերից բժիկներ են հաւաքվելու ջրանցքի հանդիսարար բաժան օրվայ համար...

Ասեմք վատ չէր լինի եթէ մեր քաղաքային վարչութիւնը քիչ թէ շատ մաքրէր Թիֆլիսից ներքին ստամոքսները:

Եթէ փողոցները չեն մաքրվում, դո՛ւն բնակիչների ստամոքսները փոքր ինչ մաքրվեն:

ԱՍՄԱՆ

մարդկանց մտադրութիւնը, որոնք զեկախարում էին ուսուցչական ժողովի գրասխան և վարչական գործերին:

1886 թուի Ռուսաստանի արտաքին վաճառականութեան վերաբերեալ նորերում հրատարակված պաշտօնական տեղեկութիւններէն երևում է հետևեալը. 1886 թվին մարտային հարկերը աւելի են եղել 1885 թվականի մարտային հարկերէն 9,899,240 ռուբլիով յօդուտ պետական զանաւարտին: 1886 թվին Ռուսաստանից արտաքին շատ քիչ է արտահանուել՝ համեմատելով միւս արտաքին հետ. 1886 թվին արտահանուել է Ռուսաստանից 436,515,000 ռուբլու արարանք միայն. 1885 թվին արտահանուել է եղել արարանք 62 միլիոն ռուբլու գումարով աւելի: 1883 թ. սկսած Ռուսաստանի արտահանութեան առևտուրը աստիճանաբար ընկել է: 1878 թվականից սկսած քչացել է աստիճանաբար և ներս բերող արարանքների քանակութիւնը՝ մաքսերի շատացնելու պատճառով, առանց մի օգտակար ազդեցութիւն ունենալու. առանց փոփոխութեան արժէքի վրա:

Լուսն ենք որ Կ. Պոլսում հրատարակվող հայկ. լրագր. «Արեւել» լրագր. որի մօտեցր քանի մի ժամանակ արդիւնք էր Ռուսաստանում, շատով առաջիկայ պէս նորից ազատ մուտք կունենայ Ռուսաստանի մէջ: Այդ տեղեկութիւնը, որպէս հաստատ, հաղորդվել է մեզ և Կ. Պոլսից:

«Саратовск. Листок» լրագիրը հաղորդում է որ Սարատովի մասին հարցազրուցում հրատարակում յայտնուցաւ մի նոր առաջարկ: Այդ առաջարկ հետեւեցնելը սուրբ պատկերներին նշանակութիւն չեն տալիս, իսկ սուրբ գրքերից ընդհանուր են միայն Աւետարանը, Սաղմոսը և Աւագիկից գործերը: Այդովեւ ժամանակ խաչի նշան չեն անում, եկեղեցի չեն ման գալիս, այլ աղօթելու համար ժողովում են մի տուն, բայց չեն կատարում ոչինչ ծիսակատարութիւններ: Աղանդային պատկանողները պարտաւորուել են երբեք միւս չուտել, օրի չը խմել և թմամբաւոր չը ծխել: Բացի բուսական կերակուրներից ուտում են միայն կաթ, կարագ և ձու:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԷՏԻՑ մեզ գրում են. «Օրերումս 12—15 տարեկան երեք երեխայ գնում են դաւ և աւ և ո յ ի զ դարման բերելու: Ահաասարակ դարմանանոցներում դարմանը ներքինի են վերցնում, այնպէս որ ներքին դատարարում է, իսկ վերինից տանում է կամարի ձև: Այդ օրը դարման վերցնելիս, դարմանանոցը փչում է և երեք երեխաներն էլ տանն են մնում. մինչև տեղական բժշկի համեմել երեքն էլ մնում են»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Կաթոլիկ հոգևորականութեան դարձող յատկութիւններէն մէկն էլ այն է, որ նա, իր ոյժը և նշանակութիւնը պահպանելու համար, զիտէ զին մէջ զանազան միջոցներ, և չէ մերժում այսօր համակրել այն բանին, ինչ որ երէկ իրան թշնամի է հակադրակողը էր համարում: Կաթոլիկ հոգևորականութիւնը ամեն զոհողութիւն պատրաստ է անել իր հեղինակութիւնը չը կորցնելու համար, և դարմանալի էլ չէ, թէ ինչպէս այդ դատարարը, որը ունի մի ամենաաւարտիկ անցնալ, որը իր ետևից թողել է մի անջնջելի ծանր պատմութիւն, և որի դէմ դարձելով ընթացքում կուսել է և կուսում է Եւրոպայում, այսօր շարունակում է զեռ իրականում նշանաւոր դեր խաղալ նոյն իսկ եւրոպական քաղաքականութեան մէջ, և այդպիսով այսօր Հռոմի պապը ներկայանում է իբրեւ մի զօրութիւն, որը կարողանում է վճռական ձայն ունենալ եւրոպական մի քանի երկրների նոյն իսկ ներքին հարցերում: Ինչպէս երևում է կաթոլիկ հոգևորականութիւնը՝ իր ամբողջ անհամակրելի անցնալով և ներկայով անդամ՝ դու չը շարունակի ապրել, մեծ ոյժ ունենալ, ազատել և անդամակերպել, քանի որ այդպիսի ազդեցութիւն ունենալու համար այսօր նա զիտում է այնպիսի միջոցներ, որով նա յայտնի ձեռք բերել նոր ժողովրդականութիւն և նոր աշխարհային նոյն իսկ սօցիալական կուսակցութիւնների մէջ:

Կաթոլիկ հոգևորականութիւնը այսօր ձեռք է մտնում սօցիալականութեանը.— դա մի իրողութիւն է, որը իր վրա առանձին ուշադրութիւն է գրաւել, և որի մասին հոգում են շատ տաղանդաւոր կաթոլիկ բարձրաստիճան հոգևորականներ: Նորերում անդադրեցնական կիսապաշտօնական շարժումներն արժանի գրաւում են, որը վերաբերում է այն հարցին, թէ ինչ յարաբերութիւն պէտք է ունենայ կաթոլիկ եկեղեցին դէպի սօցիալական հարցը: Այդ գրաւումը ուղղած է Հռոմի պապի հասցէին, և նպատակ ունի ցոյց տալ, թէ արդեօք կաթոլիկ եկեղեցին պէտք է դատարարի բանաւոր դիմադրեալ հեղինակը այն սկզբունքն է պաշտպանում, որ կաթոլիկ եկեղեցին չը պէտք է հակառակի բանաւորական ընկերակցութեան հետեւալ հիմունքներին վրա. 1) բանաւորական ընկերակցութեան նպատակը հակառակ չէ կրօնին և բարոյականութեան. 2) ընկերակցութիւնը ժամանակաւոր է, որովհետև նա կանխեստանայ այն բոլորից, երբ կանխեստանայ այն շարքը, որի դէմ նա կուսում է. 3) եթէ եկեղեցին չը դատարարի բանաւորական շարժումը, այդ կը լինի մի անհեռաւոր և չը մտածած քայլ, որովհետև բանաւորների գանգատները արդարապէս են. 4) եկեղեցին հալածանքը վտանգաւոր է նոյն իսկ եկեղեցու համար, որովհետև դա թշնամութիւն կը յարուցանէր դէպի կաթոլիկութիւնը ռաւիպապետական երկրներում, Ամերիկայում այն. 5) Այդ հալածանքը մինչև իսկ անօգուտ կը լինէր, որովհետև բանաւորները ուշադրութիւն չեն դարձնել դա վրա. 6) կաթոլիկ եկեղեցու իրանց երեսը կը դարձնէին նրա ամենամեղքը՝ համակրողները անդամ. 7) եթէ կաթոլիկ եկեղեցին զիմադրութիւն ցոյց տալ, զը բանով մեծ վնաս սուած կը լինի իր ֆինանսական դրութեանը, և չի տառայ ոչինչ նախաւորութիւններ. և 8) դէպի եկեղեցին կը սկսվէր թշնամութիւն և ատելութիւն:

Ահա այսպիսի մտքեր են յայտնում կաթոլիկ հոգևորականութեան զանազան ներկայացուցիչները, և պաշտպանում են այդ մտքերը՝ որպէս զի կարողանան նոր ոյժ տալ կաթոլիկ հոգևորականութեանը, որի հեղինակութիւնը և նշանակութիւնը վերջին ժամանակները սկսել է ընկնել և թուանալ: Այդպիսով կաթոլիկ հոգևորականութիւնը վճռել է ամեն տեսակ միջոցների զինով, որպէս զի կարողանայ գոյութիւն ունենալ մի աշխարհի դարում, երբ առաջ են եկել բոլորովին նոր խնդիրներ և նոր պահանջներ, և յոյս ունի, որ այսպիսով կարող է ինքնուրոյն, անկախ և ազդեցիկ գոյութիւն ունենալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիեննայից հաղորդում են, որ բուլղարական այժմեան գլխաւոր գործիչ Ստամբուլով մտադիր է Գարնիշտա գնալ, իշխան Բատտենբերգի հետ անձամբ տեսնուելու համար:

—Իտալական նոր միլիտարութեան մէջ Լիբիայի մասերը ուրախութիւն պատճառեց Ֆրանսիայում Դա մի գործը հարուած է գերմանա-աւստրիական կուսակցութեանը, որի զեկախար Բօրիկանը արդէն զրկվեցաւ միլիտարական պօստից:

—Անարխիստները նորերում պատրաստութիւններ տեսնում զինամիտով քանդելու սոցալիական կօրտէսների չինութիւնը.—բայց վաղօրօք յայտնուեցաւ այդ բանը և արգելվեցաւ:

—Փարիզից հեռագրում են, որ իշխան Բիսմարկ առաջարկեց թիւրքաց Սուլթանին միմայ գերմանա-աւստրո-իտալական դաշնակցութեանը: Դրա փոխարէն Բիսմարկ խոստանում է Սուլթանին տալ նախապահութեան իրաւունքը Բալկանեան պետութիւններին դաշնակցութեան մէջ:

—Անդլիայի արտաքին քաղաքականութեան վերաբերեալ գործերը բարդ կերպարանք են առել: Լիբիպապետական հարցը տարածաշրջանութիւններ է դըրում Բ. Գրան և անգլիական կուսակալութեանը մէջ: Միջին Ասիայի գործերը այնպիսի ընթացք են ստացել, որ Մեծ-Բրիտանիան պէտք է կտրական միջոցների դիմէ. նա կտրական միջոցների պէտք է դիմէ և հարաւարեւելեան Եւրոպայի գործերին վերաբերեալ հարցի մէջ.—Իր հեղինակութիւնը և ոյժը պահպանելու համար անգլիական կառավարութիւնը պէտք է լարի իր բոլոր ոյժերը:

—Հեռագրիցները իր բերելին, որ իբրեւ թէ իշխան Բատտենբերգը արտաքրկեցաւ ընդունելու բուլղարական դաշն. սակայն վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Ալեքսանդր իշխանը մասնակցութիւն ունի Բուլղարիայի մէջ տեղի ու-

նեցող գործերում, և իբրեւ չի հրաժարվի Բուլղարիայի մասին հոգալուց:

—Ինչպէս երևում է եւրոպական լրագիրների Բուլղարիայից ստացած տեղեկութիւններից, մինչև-տըր-նալսադա՝ Բուլղարիայում՝ ճանապարհորդելով միացեալ-Բուլղարիայում՝ գործերը շատ լաւ դրութեան մէջ է գտել: Բուլղարիայի զանազան կողմերում կազմակերպվում են ընկերութիւններ, որոնց նշանաբանն է «Բուլղարիան բուլղարացիների համար»: Այդ ընկերութիւնները հաւաքում են փողեր, պատրաստում են զէնքեր, և անդամները պարտաւոր են հարկաւոր ժամանակը պատերազմի դաշտը դուրս դալ:

—Գերմանական «Kölnische Zeitung» հրատարակել է նորերում մի մեծ յօդուած, որը իբրեւ թէ ստացել է Պետերբուրգից, և որի վերնագիրն է «Ռուսաստանի դրութիւնը»: Լրագիրը խորհուրդ է տալիս Ռուսաստանին ձեռք վերցնել Բալկանեան թերակղզուց: Լրագիրը այն կարծիքն է յայտնում, որ Ռուսաստանը Պոլսի պէտք է դնայ ոչ թէ Բալկանի վրայով, այլ Փարս-Ասիայով, քանի որ այդ դէպքում ռուս-հայկական սահմանից մինչև Պոլսի ընդամենը 1200 կիլոմէտր է, և հակառակ կողմերը կը լինեն միմիայն Թուրքիան և Անդլիան, իսկ Աստուրիան այդ պատերազմի մէջ չի խառնվի: Այդպիսի կարծիքները գերմանական լրագիրները յայտնում են, աւելացնելով, որ այդ գերմանական քաղաքականութեան արտաքայտութիւնն է:

ԽՍՈՆ ԼՈՒՐԵՐ

Ջատիկ տօներին թիֆլիսի փողոցները, զանազան դարձութեան տեղերը, մանաւանդ այդիները կենդանացել էին. Օրթոսապա, Միքայէլեան փողոցի վրա զանազան զանազան պղծանքներ՝ «Վազա», «Կալեթիմանկո», «Վրեմիա», «Ջօրտօ» վրեմիա», «Շիֆապարա» և այլ այսպիսի սրամիտ անուններ կրող պղծանքներ, Մուշակաբեկ, «Տրամպլա» ցլած էին անապին բազմութեամբ... Հաւաքաբար խողովներից, խողովներից թաղի նեղ փողոցներից ամբողջ խումբում էր հասարակական այդիները և դուրսնուցնում տեղերը, մեծ պատի երկար և ծանր օրերից յետոյ մի փոքր ազատ չունէ ջաշկուտ, առ ժամանակ մոռանալու կեանքի բոլոր ծանրութիւնները, դժուարութիւնները... Մուշակաբեկ և բոլոր այդպիսի տեղերում խառնիճաւորանք բաղմութիւնը շարժվում է այս ու այն կողմ: Այդտեղ կարելի էր տեսնել և ահապին մեծութեան փա և փախել, և չապի, և արիստալի, և սերտուկ, և ժողովարարի և շէտալա... Սեղաններին շուրջը նստած ամբողջին պատկանող խմբերը ուրախանում են: Բազմութիւն չիլերը շարժված են. կախիթի զինին տաւտ է, թէ և սեղանի վրա միայն մի քանի կտոր հաց, մի քանի ձու և մի փոքր կանաչի է դրած: Սեղաններից սփռուցով չեն ծածկված, այլ կանաչ խոտով: Մեծամեծ հանգիստական չէ խմանում թէ որ կողմը նայէ: Մի կողմ թիւում է դուռնան, մի ուրիշ կողմ հնչում է մեղամարդոտ թմբուկը, իսկ մի ուրիշ կողմից երբեմն երբեմն բոլոր միւս նուազանչիւնները խեղդում է խմբական մուրկիւն... Բնորոշուող արժեքի, հարահրողի, չիլիթի, ձիւլիցի, կառքի-րի զղբիցի միջից երբեմն երբեմն լսվում է թմբուկի հնչիւնը, որի հետ միայն զեֆ-անոդներ ի խումբը դադրած ձայնով երգում է ժողովրդական երգը:

Հրաժարվել և տեղ տուաւ:
Միտլեան ձայնին, միտլեան ձայնին:

Մի ուրիշ կողմից լսվում է լեւնցի խմբերի ազատ երգը. երբորը կողմից թուրք երգիչը թուրք և սաղի ակումպանիմնտով իր լսելին է երգում, ասելով. «Հողը անձրեկից յաղեցաւ, և քեզանից չը յաղեցաւ»... Ահա ամբողջ շարժվեցաւ դէպի մի կողմ. անտեղի կազմված է փոքր չըջան և երկտասարդ լեւնցի լեղզին «Լեղզինկա» է պարում. նա ողբերգութեամբ իր ձեռքի մէջ խաղացնում է երկու հատ սուր, այդ սուրի հետ նա այնպէս է վարում, ինչպէս իր սրովն ամենամոտ մի իրի հետ... Ամեն կողմ նկատվում է կատաղի յափշտակութիւն. կարծէք այդ բոլորի մէջ մասնակցողները ուղղում են մինչև վերջին ծայրը հասնել.—խմել, կտրել, փչել, նորից խմել: Կարծէք կախիթու զինու և ժողովրդականացրած դարեկներ հետ միասին ամբողջ մի քանի սուր օրեր ընթացքում ուղղում է խմել և մարտել իր բոլոր գործադրութիւնները, իր բոլոր հոգիներ և վտերը... Եւ մեր ամբողջ տարալայ մէջ մի քանի անգամ դառնում է դուրսնանում և թարմանում... Եւ այդ ինքնամոռացութեան տեսարանների կողքից անցնելով՝ մեծ մասամբ իրական սուր զիտում է դէպի Վրեմիեի ուխտաւորներն Ամստըր, խալը համբուրկով, կինը աղօթում է իր ամուսնու համար, օրերը աղօթում է իր սպասարկի համար, քրոջը եղբոր համար, և բոլորը միասին աղօթում և հանգիստ կեանք և մուրաբի հանելը են խնդրում... Բայց ոչ է այդ հանդիստ կեանքը... Անցնում են մի քանի սուր օրեր և ամբողջ ընկնում է նորից իր միատեսակ, ծանր, և դժուար ամանիկ կեանքի մէջ...

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 9 ապրիլի: Յինանների միջնաւորութեան կառավարչի անունով տուած Բարձրագոյն ուկազով հրամայված է. պետական զանաւարանի միջոցները բարւոյնելու համար, կատարել ներքին 40/6-ական փոխառութիւն հարկը միլիոն ռուբլու հրամայվում: Փոխառութիւնը մասնակցելու է պետական պարտքերի մատնանի մէջ, 40/6-ական ներքին փոխառութեան անունով: Օրիգինալները հրատարակվում են 100, 500, 1,000 5,000 և 10,000 ռուբլու արժէքով և կարող են լինել անուանական և ոչ-անուանական: Տօկոսները վճարվում են հոկտեմբերի 1-ին և ապրիլի 1-ին: Պարտքի հանդիմանք սկսվում է ապրիլի 1-ից 1888 թվի և շարունակվում է 80 տարվայ ընթացքում, որի համար յատկապէս կազմվում է հանդիմանող դրամադուլու: Պետական բանկը յայտնում է որ ստորագրութիւնը օրիգինալների վրա կընդունվի լսելով, նրա գրասենեակներում և բաժանմունքներում 14-ին, 15-ին և 16-ին ապրիլի: Ստորագրութեան գինը 84/6 է օրիգինալի հատարակ արժէքի:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 9 ապրիլի: Ժողովրդական լուսաւորութեան միջնաւորութիւնը յայտարարում է, որ ընդունելութիւն կանանց բարձրագոյն կուրսերում: Պետերբուրգում, Մոսկուայում, Նիեմիում և Կազանում 1887/8 ուսումնական տարվայ ընթացքում չէ թողարկում: Գերմանա-լեյտոնական Օրթոթիկական յայտնված է Բարձրագոյն շնորհակալութիւն նրա օրինակելի, գերազանց, հինգ տարվայ ընթացքում պարտաւորութիւնները անընդհատ կատարելու համար: Երէկ մեռաւ Պետերբուրգի բերդի բերդապետ գնինբալ աղիւսանտ Գանեցկի: 10.10.10, 9 ապրիլի: Սարբերի երկ արտասանեց պահպանողական դաշնակցութեան մէջ մի ձու, որով հաւատացնում էր, որ Խրանդիայի համար միջնաւորութեան նախագիծը միջոցների նպատակն է ապահովանել իսկական ազատութիւնը, արեւմտախիչ անել յեղափոխականների սպասարկը: Միմիայն յարակցեց, որ Գաղափարից հետեւել են արտաւարտ կուսակցութեան աշխի ընկնող անդամներ, և որ նրա փոխարէն Գաղափարն է նոր հաւատարմի կողմնակիցներ պարենկականների մէջ, այսինքն մարդիկ, որոնք ապրում են աշխարհային զոհաբերութիւններով, որոնք բացարձակ սպանութիւն են բարոյութիւն:

Ա.Լ.Ս.Ս.Ա.Ս.Ս.Ս. 9 ապրիլի: Կանաչաւորի մօտ տեղի ունեցաւ արհեստանոց ընդհանուր խօսակցութիւն: ՍԱՐԲԵՐԻ, 10 ապրիլի: Հաստատվեցաւ շողեհաւային երթմանութիւնը Վոլգայի ստորին մասերի հետ:

ԿՍ.ՉԱՆ, 10 ապրիլի: Ջուրը վաղաքի մէջ աւելանում է: Մի տասն օրից յետոյ սպասվում է նաւագնացութեան բացումը:

ՓԱՐԻՅ, 10 ապրիլի: Գերմանիայի տաճարաւորները վրա գտնվող Պանիկ կայարանի ֆրանսիական պոլիցիական կօմարտ Եւրեթը, անցնելով սահմանը իր ծառայութեան գործերի համար, յանկարծ կայանաւորվեցաւ ծառայել կերպով: հայտնված գերմանական պոլիցիական ազդեանքի ձեռքով և տարվեցաւ: Մեջ քաղաքը, որտեղ և բանտարկվեցաւ: Գործի մանրամասնութիւնները դու յայտնի չեն:

ԲԵՐԼԻՆ, 10 ապրիլի: Երէկ դաշնակցական խորհուրդը վաւերացրեց 172 միլիոն մարկի քաղցիչ կրեմոր: Այդ գումարը նշանակվում է զիւստրապալէս պատերազմական նպատակների համար, ինչպէս, օրինակի համար՝ նոր վերադարձական օրէնքի իրադրոյնը, և արդիւնների վերաշինութիւնները, չիլցյալական սահմանների մօտ ազգապալտական ճանապարհների անցկացնելը և դորեւրին նոր զէնքերի մատակարարելը:

ՊԵՏԱՍԻԱՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, Ա. Դ. Նամակ գրեցիք ձեզ. ԲԱՂԻՍ, Բաղդադ, Ստացանք և կը պատասխանեք ձեզ մասնաւոր նամակով:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, Նիսիան, Ուրեմն կը տպելը շարունակվեցան: Այն, մեզ էլ շատ ուրախ կը լինէինք ձեզ հետ տեսնուելու:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, Ս. Բ. Եւրոպական երկ, շատ հեռաքրքիր յօդուած է:

ՄԱՐՍԷՅԻ, Կ. և Թ. Ստացանք «Մշակի» ձեր բաժանորդագրելը 10 ռուբլի փոխանակագրով պիտուէ՛սէ՛րեանի վրա իրան կը ներկայացնեն:

ԵԱԼՍԱ, Պ. Բ. Ուղարկեցիք ձեզ ձեր պահանջած «Экон. пол. турп. армян» բրոշուրը: Կէս տարվայ բաժանորդակցարը տալուց:

ԲԱՂԻՍ, Ա. Ա. Եւրոպական երկ շնորհաւորութեան և պատկերի համար: Մի հարցի առիթով շուտով նամակ կը գրենք ձեզ:

ԲԱՂԻՍ, Ա. Ա. Եւրոպական երկ շնորհաւորական հեռագրի համար:

ԱՆԻՍԻՍԱ, Բ. Ա. Ձեր «Անբուժելի վիշտ» վերնագրով վիշտը յանձնեցինք նրան, ում դուք յանձնարարել էիք:

ՄՈՍԿՎԱ, Լ. Ս. Մեզը առիթ չունենք չը հաւատալու ձեր գրածին, բայց եթէ ուղում էք որ այդ հերքումը սպաղորվի, պէտք է գրէք այնպէս, որ սպաղ հակառակ լինէր:

ԲԱՂԻՍ, Մի քանի պարտններին. Ընդունեցէք մեր շնորհակալութիւնը:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՀՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿՐ ՏԵՄՆԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵՁՈՒՈՎ

ՁԻՆԻՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Վերնագրով զբաղվող Գրքերը պարունակում է իր մեջ. ա) ընդհանուր գինւորագրական կանոնադրութեան համառոտութիւնը, և բ) կովկասեան գինւորագրութեան վերաբերեալ 1886 թւի մայիսի 28-ի Բարձրագոյն հաստատած պետական խորհրդի կարծիքը ամբողջապէս:

ԵՂԲԱՐՅ ԾՈՎԻԱՆՈՎՆԵՐԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

(Միջին փողոց, քարվանսարայ Անանովի)

Վաճառում է և գնում է տոկոսաբեր թղթեր և փոխ է տալիս նոցա գրաւականով (ՌԱՂԱՏՈՄՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՆՁԵՒ 210 ԲՈՒՖԼԻ): Փոխադրութիւններ է անում ՄՍՍԿՎԱ, ՕՐԵՍՏԱ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ և արտասահմանի զանազան քաղաքներ:

7—16 (ե. շ.)

Լոյս տեսաւ Ս. Պետերբուրգում, եւրոպական նստանիւթի «ԲՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ» երգարանը, աշխատասիրութիւն ՂԱԶԱՐՈՍ ՔԱՀԱՆՅԱՅ ՅՈՎՍՒՖԵԱՆԻ, որը պարունակում է իր մեջ ընտիր երգեր, պարերգեր և աղօթքներ, որոնք յարմարեցրած են դաշնամուրի վրա նուագելու: Իւրաքանչիւր օրինակի գինն է ճանապարհածախսով 2 ռուբլի: Վաճառվում է թիֆլիսում պ. Յ. Սուրբանշանցի երաժշտական գրախանութում և միւս գրադատականոցներում, նոյնպէս և աշխատասիրողի մօտ: Հասցէն.— Թիֆլիս—Հաւարար, Գաղարոս քահանայ Յովսէփեան:

6—10

ԷԼԻԿՍԻՐ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ELIXIR DENTIFRICE)

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ՀԱՅՐԵՐԻ

ՍՈՒԼԻԱԿԱՆ ԱՐԲԱՅՈՒԹԻՒՆՅՑ (GIRONDE)



Ատամների համար Բենեդիկտեան հայրերից պատրաստած էլիկսիրը ամենօրեայ գործածութիւնը, մի քանի կաթիլներ ջրի մի կէս բաժակի մէջ, պահպանում է ատամները փշանալուց, սպիտակ է դարձնում և պնդացնում է ատամները, մաքրում է և պահպանում է ճիւղը:



Գինը գորակը 2 և 8 ֆրանկ. ֆոլիոն՝ արկղիկը 1 ֆրանկ 25 սանտ. Պատաս՝ արկղիկը 2 ֆրանկ: Հիմնարկութիւնը գոյութիւն ունի 1804 թւից. Գլխավոր ագէնտ SEGUIN, Բօրդօ (Ֆրանսիա). Թիֆլիսում է պ. Բերլըմօնի մագաղանում և պարֆիւմէրների ուրիշ մագաղաններում:

10—48 (ե. շ.)

Պատիւ ունեւ յայտնելու Թիֆլիսի հասարակութեանը, որ Ձատիկ երկրորդ օրից ԱԶՆՈՒԱԿԱՆ Ն. Պ. ԼՕՐԳԻՊԱՆԵՅԻ «ՏՐԱՄՎԱՅ» Բօտոնայում սկսվելու է Ժողովրդական գուարձութիւնների ամսարային սեզօնը: Ամենայն օր, երեկոյեան Ժամի 4-ից մինչև 11-ը, կատարեալ խօրով (38 մարդուց), նուագապետ պ. Գլավաչի անմիջական ղեկավարութեան ներքոյ, կը արվին ԿՈՆՏԵՐՏԵՐ, որոնք բաղկացած կը լինեն ամենաընտիր Ժամանակակից պիեսաներից:

Մ Ո Ւ Տ Ք Ը Զ Ր Ի Է

Ինչպէս բոսնիական, նոյնպէս և տերրասը դարձեալ կիսով չափ մեծացրած են: Առանձին կօնցերաների և Ժողովրդական գուարձութիւնների Ժամանակ կը շինվին առանձին տեղեր՝ չնչին վարձով՝ ինտելիգենտ հասարակութեան համար: Գարեջրի պահեստը անցեալ տարվանից տասն անգամ մեծացրած է, ամուսնայ համար պատրաստված է մեծ քանակութեամբ լաւ տեսակի բաւարեան և սև գարեջուր: Գարեջրի գնահատողները և քաջ տեղեակները հրաւիրված են փորձելու գարեջուրը՝ առանց փշարելու, փերթիլիայի ճշմարտութեան մէջ համոզվելու համար: Ձատիկ երրորդ շաբաթից սկսած, չորեքշաբթի օրերը տեղի կունենան Ժողովրդական առանձին գուարձութիւնների լարախաղացներով, հրախաղութիւններով, օդափամփուլաներով և ուրիշ խաղերով որոց մասին կը յայտարարվի աֆիշաներով և տեղական բոլոր լրագրիւնների մէջ յայտարարութիւններով: Բոտոնայում միշտ կայ ամեն տեսակ սառն ուտելիքներ և զովանոց ջրեր (նոյնպէս և քաղցրեղէններ), խմորեղէններու ծխախոտ:

Բոտոնայի կառավարիչ Յ. ԲԱԿԱՅԵ

2—3

ՆՈՐ ԳԻՐԻՔ (ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵՁՈՒՈՎ)

ՀՈՂԱՅԻՆ ՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՌՈՒՆՔԸ ՀԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ Ս. Բահաթրեանի. 1 զրջան: Գինը 35 կ: Թիֆլիսի գրադատականոցներում: 10 աւելի առնողներին 20% շնորհ կը լինի Կենտրոնական գրադատականոցում:

27—30

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԵՂԲԱՐՅ ԺԱՄՀԱՐԵԱՆՅ

Մ Օ Ս Կ Վ Ա Յ Ո Ւ Մ

Այն պարոններին, որոնք յանկանում են ԱՊԱՀՈՎԵԼ առաջին և երկրորդ փոխառութեան ՏՕՄԱԿՆԵՐԸ մեր բանկում, ինքրուք ենք ուղարկել ամեն հատի համար 60 կօպէկ, և 10 կօպ. անդորրագրի համար առանձին:

3—10

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами

въ Тифлисе (Графская ул., противъ Музея).

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՎԱՐ ԿՈՎԿԱՍԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՍՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաֆսկայա փողոց, Մուզէի դիմաց):

Ստացված է Մալց-Է. Կատարակտ. հազի համար կօնֆեկտներ՝ «Մի հազիր»: Ձկան իւղ մաքրած և ոչ-մաքրուր. Պրօվանսի ձէթ, քաղախի էսէնցիա, բուսական ձէթ, Բերթերի ԱՄԵՆԱՆԻԱՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕՍԼԱՅ, լեզակի փռչիլով և գունտերով. բծեր հանելու ղեղեր, կօշիկների և վեռնիկ կօշիկների համար. սամալարը և առհասարակ մետաղեայ գործիքները սրելու իւղ և փռչիլ: ՇՎԵԴԱԿԱՆ ԳՐԵՖՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՖԻՐՄԱՅԻ ԼՈՒՅԿԻ, և տնտեսութեան ուրիշ պարագաները լէզակի թխանու բաղամբ. թխանու կրճ. էսէնցիա և էնզիմների կօմպոնիտի աղբիւններ, երեսի և մարթու թարմութիւնը պահպանելու համար: Կիւտնէի էլէոպատ մաղերը սնդաղներու համար: Գեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ, ԹԻՖԼԻՍՈՒՄ, և ԲԱԳՈՒՆ քաղաքներում:

ՎԻԷՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

(ВѢНСКІЙ МАГАЗИНЪ)

Գօյօլիսիկի պրօպէկտի վրա, Մղիվանի տանը.

Պատիւ ունեւ յայտնելու Թիֆլիսի յարգելի հասարակութեանը, որ մօտ օրերս ստացայ ՎԻԷՆԱՅԻ, ՎԱՐՇԱՎԱՅԻ և ՄՍՍԿՎԱՅԻ ամենատաաշնակարգ գործարաններից մեծ քանակութեամբ ՏՂԱՄԱՐԿԱՆՅ և ԵՐԵՒԱՆԻՐԻ գարանային և աշնանային պատրաստի ՀԱԳՈՒՍՏԵՐ ամենավերջին ձևի:

Գները ամենի համար ՄԱՏՁԵԼԻ և ձեռնառու են:

Վ. Խուզավերդեանց

3—10

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն

Պապիրոսի Թ.Պ.Թ տետրակների և ԳԻՂԱՆԵՐԻ, պահեստ ամեն տեսակ թղթի և կարտօնի

Ս. Մ. ԱՆԱՆՈՎԻ

Մեծ ընտրութիւն պապիրոսի թղթի տետրակների և զվեղաների իսկական սիմիլոնի թղթից, փարիկի և ՎԻԷՆԱՅԻ յայտնի գործարանների: Կեղծումներին առաջին առնելու համար պապիրոսի թղթի տետրակների իւրաքանչիւր թերթիկը կրում է ֆիրմայի անունը ՌՈՒՍԱՅ և ՀԱՅՈՅ լեզուով: Պրէյսլուրանները անվարձ են ուղարկվում առաջին պահանջման համեմատ: Հասցէն. Բօտոն (Գօնի վրա) Ս. Մ. Անանովին. Ростова (на Дону) С. М. Ана-НОВУ.

5—10

ԹՈՅԼՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱԲԱՂԱՔԻ ԲԺՇԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԱՆ

Էլէկտր-Melange. Մազերի արագ և առատ բուսաց-նելու համար և նրանց պահպանելու թափվուց: Գինը 2 ռ. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ուտ-ոնքին, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:



Բաղդամ—Eugénie. զափնեա և պսակի փռնիք ծաղիկներից, երեսին, չլինքին և ձեռքերին քնք-չուքիւն և փափկ-պէս և մարմարի-ծնի սպիտակու-թիւն տալու հա-մար, շուշանի և վարդի անուշա-հոտութեամբ, նոյն պէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոճնաղանելու: Գինը 1 ռ. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ուտոնքին, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով: Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտնիքից: Առաջարկ-վում է մանուշակ թարմութեան և պարանոցների համար: Գինը 1 ռ. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ուտոնքին, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով: Այդ բոլոր երեք կոմպոնիտները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պա-ռնակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր:

Բէրթա Րիս.

ԱՐՏՈՒԹԻՒՆ ՍՍՏԱՄ ՊՕՄԱՐ

Իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անպարփ երեւոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երկտասարդական թարմութիւն և ղեղեղեթիւն: Գինը մի սրուակի համար 1 ռ. 60 կ.

Քիւլին-զլիւքերիւնեան պօմաղ պերական բաղամբ, մաղերը սնդաղներու, խտացնելու և մեծացնելու համար: Գ. 2 ռ. սրուակի համար:

Ձեռքերի պօմաղ: Գինը սրուակի համար 1 ռ. 30 կ.: Խաղաղանիւր սրուակի վրա դրանում է պաշտպանողական գրքով, մի «Երեւոյթ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugénie» սպիտակ և վարդագոյն փռչի. Գ. արկղիկի վրէժնով 1 ռ. 50 կ. առանց վրձինի 1 ռ. 20 կ.

Մազերի ներքի երեք գոյնի. սև, շագանակադոյն և բաց-չէկ. Գ. արկղիկի 3 ռ. Ներքի «Բիս Դոտմանի» գործարանի:

Գլխավոր պահեստ Թիֆլիսում գտնվում է Վ. Գրիվնակի ղեղատան ապրանքների մագաղ-դում, «Էմբոն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը:

91—100

Խորէն ծայրագոյն վարդապետ Ստեփանի հրատարակած

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՍԱԳԻՐԸ

Պիտի հրատարակի Պետերբուրգում կանոնաւոր կերպով ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ և ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ուղղութեամբ ներկայ 1887 թւի սեպտեմբեր ամսից քանի մի հոյադն երկտասարդների գործակցութեամբ և աշխատակցութեամբ: Տարեկան գինն է 5 ռուբլի:

Հասցէ. Редакция „Манкаваржаноць“. Петербургъ. Невскій проспектъ д. армянской церкви.

2—4